

PROCEEDINGS OF THE YEREVAN STATE UNIVERSITY

Physical and Mathematical Sciences

№ 3 (238), 2015

ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Արամյան Ռ. Հ., Մանուչարյան Ա. Գ. Ուսուցիկ մարմնի հենաֆունկցիայի ներկայացում էջ. 3–7

Աշխատանքում գտնված է բանաձև n -չափանի ուռուցիկ մարմինը հատող հիպերիարթուրյունների, տեղաշարժի նկատմամբ ինվարիանտ, չափի համար այդ մարմնի 2-չափանի պրոյեկցիաների կորությունների տերմիններով: Այստեղ նաև, տրված է 3-չափանի կենտրոնական սիմետրիկ ուռուցիկ մարմնի հենաֆունկցիայի ներկայացման համար կարճ ապացույց, որը ստացվել էր ուռուցիկ մարմնի ստոխաստիկ մոտարկման միջոցով:

**Հակոբյան Յոլ. Ռ., Ալեքսանյան Ա. Ա. Երկանկյունագծային մատրիցների Սուր-
Պենրուզի հակադարձումը. II** էջ. 8–16

Ներկա հոդվածը սույն ամսագրի նախորդ համարում տպագրված [1] հոդվածի անմիջական շարունակությունն է: Աշխատանքում սկիզբ է դրվում Սուր-Պենրուզի հակադարձում խնդրի դիտարկումը, երբ վերին երկանկյունագծային մատրիցի գլխավոր անկյունագծի վրա կամայականորեն տեղաբաշխված են մեկ կամ մի քանի զրոներ: Ստացված նախնական արդյունքները կօգտագործվեն հետազոտության հաջորդ՝ երրորդ մասում:

**Հակոբյան Հ. Ա., Թորոյան Ա. Զ. Հանրահաշվական կորերը միակորեն որոշող
հանգույցների փոքրագույն քանակի վերաբերյալ** էջ. 17–22

Հայտնի է, որ $N-1$ հատ n -անկախ հանգույցներ, որտեղ $N = \frac{1}{2}(n+1)(n+2)$,

միակորեն որոշում են դրանցով անցնող n -րդ կարգի կորը: Ինչպես ապացուցված է [1]-ում, $n-1$ կարգի կորը որոշելու համար անհրաժեշտ n -անկախ հանգույցների քանակը $N-4$ է: Նախորդ հոդվածում առաջարկված է նաև վարկած, որը վերաբերյալ է անալոգ խնդրին ընդհանուր $k \leq n$ կարգի դեպքում: Ներկա հոդվածում ապացուցվում է այդ վարկածը, համաձայն որի $k \leq n$ կարգի կորը որոշող n -անկախ հանգույցների փոքրագույն քանակը $\frac{(k-1)(2n+4-k)}{2} + 2$ է:

Տնայիս Ե. Գ. Բերգմանյան տեսքի օպերատորների մասին \mathbb{R}^n -ի միավոր գնդում
էջ. 23–30

Աշխատանքում ապացուցվում է բերգմանյան տեսքի օպերատորների սահմանափակությունը խառը նորմով տարածություններում \mathbb{R}^n -ի միավոր գնդում: Գտնված են սահմանափակ հարմոնիկ պրոյեկտորներ խառը նորմով և լիպշչյան տարածություններում: Ապացուցված են Ֆորելի–Ռուդինի տեսքի համապատասխան բեռնմները:

Բաղալյան Լ. Հ., Կրիվորոտով Վ. Ֆ. Ստուգարկումների օգտագործումը տնտեսագիտության, ֆիզիկայի և տեխնիկայի ոչ գծային խնդիրներում էջ. 31–36

Աշխատանքում համառոտ սահմանվում են ստուգարկումների տեսության տեսանկյունից ոչ գծային խնդիրների հիմնարար սկզբունքները տնտեսգիտության մեջ, ոչ գծային դինամիկայում և տեխտոգիական որոշ խնդիրներում: Ստուգարկումները դիտարկվում են և՝ որպես ոչ գծայնության աղբյուր, որը տեխնիկապես ներմուծվում է վարիացիոն խնդրի լուծման մեջ, և՝ որպես ոչ գծայնության կառուցվածքային տարր, անմշականորեն ստեղծելով կապի առարկա: Վեկտորային դաշտի ձևափոխության համեմատ ինվարիանտ հավասարումները դառնում են վարիացիոն խնդրի լուծման արդյունք, որոնք տվյալ ոչ գծային ազդեցության պատճառ են:

ԲՆՖՈՐՄԱՏԻԿԱ

Խոչատրյան Ն. Ա. Միջակայքային տոտալ ներկում չունեցող գրաֆներ էջ. 37–41

G գրաֆի տոտալ ներկումն այդ գրաֆի այն ներկումն է, որի դեպքում հարևան գագաթները և կողերը ներկված են տարրեր գույներով և ցանկացած գագաթ և նրան կից կողերը ևս ներկված են տարրեր գույներով: G գրաֆի տոտալ ներկումը $1, 2, \dots, t$, գույներով կանվանենք միջակայքային տոտալ t -ներկում, եթե բոլոր գույներն օգտագործվել են և յուրաքանչյուր ն գագաթին կից կողերը և այդ գագաթը ներկված են $d_G(v)+1$ հաջորդական գույներով, որտեղ $d_G(v)$ -ով նշանակված է v գագաթի աստիճանը G գրաֆում: Այս աշխատանքում նկարագրվում են որոշ եղանակներ միջակայքային տոտալ ներկումներ չունեցող գրաֆների կառուցման համար:

ՖԻԶԻԿԱ

Հակոբյան Մ. Ռ. Հիբրիդ կողմնորոշված հեղուկ բյուրեղներում լազերով մակածված ջերմամեխանիկական երևոյթ էջ. 42–48

Տեսականորեն կանխատեսված են լազերով մակածված ջերմամեխանիկական հոսք և տատանումներ հիբրիդ կողմորոշված նեմատիկական հեղուկ բյուրեղներում (ՆՀԲ): Երևոյթը պայմանավորված է հիդրոդինամիկական հոսքի հիբրիդ ՆՀԲ-ի “առաձգական ժապավենի” կորության փոքրացման ձգուումով:

**Կարապետյան Ա. Թ., Բարայան Յու. Ս., Թոռոսյան Ա. Ա., Շահինյան Ա. Ա.
poly(G)-ի հետ միտոքսանտրոնի փոխազդեցությունը** էջ. 49–54

Աշխատանքում իրականացվել են քառաշղթաքառական բերմողինամիկական հետազոտություններ: Որոշվել են կապման թերմոդինամիկական պարամետրեր՝ կապման հաստատունը (K) և կապման մեկ տեղին ընկնող նուկլեոտիդների քանակը (n): Ցույց է տրվել, որ կրկնակի պարույրի համեմատ միտոքսանտրոնն ավելի ուժեղ է կապվում քառաշղթաքառական բերմողի հետ: Ցույց է տրվել նաև, որ միտոքսանտրոնի քառաշղթաքառական բերմոդի ինտերկալայացիայի դժվարությունների հետևանքով, այն [poly(G)]₄-ի հետ հիմնականում կապվում է արտաքին կապման եղանակով և փոխազդեցության հազեցման դեպքում միտոքսանտրոնի մեկ մոլեկուլն ավելի մեծ թվով գուանինների հետ է կապվում ($n \geq 10$):

Մանուկյան Հ. Մ., Մանուկյան Ա. Մ. Ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիայի վրա կանոնական ազդեցությունը դարսման արատ պարունակող միաչափ գերցանցերում էջ. 55–58

Հողվածում դիֆրակցիա է հարթ մոնոքրոմատային ռենտգենյան ալիքի դիմամիկական դիֆրակցիայի խնդիրը դարսման արատ պարունակող կանոնական ազդեցությունը: Ցույց է տրված, որ կանոնական նվազեցնում է ռենտգենյան ճառագայթների անդրադարձման գործակիցը սատելիտների ուղղությամբ: Սինեուլյան ժամանակ, որքան մոտ է դարսման արատը բյուրեղի մակերևույթին, այնքան թույլ է նրա ազդեցությունն անդրադարձման գործակիցի վրա:

Նազարի Ֆարուխ. Ֆեռոմագնիսական միջավայրում էլեկտրամագնիսական ալիքների ոչ գծային փոխազդեցության արդյունավետության հետազոտությունը էջ. 59–63

Հետազոտված է քափանցիկ ֆեռոմագնիսական միջավայրում լազերային ճառագայթման դետեկտուման արդյունավետությունը: MatLab միջավայրում մոդելավորվել է էլեկտրամագնիսական ալիքների ոչ գծային փոխազդեցության գործընթացը ֆեռոմագնիսական միջավայրում՝ տարատեսակ մագնիսացման կորերի դեպքում: Ցույց է տրված, որ այդպիսի ոչ գծային փոխազդեցության արդյունքում կարելի է ստանալ անալիտուպային մոդուլված էլեկտրամագնիսական ճառագայթման գրանցում: Ազդանշանի մեծությունն ու նշանը խիստ կախված են ֆեռոմագնիսական միջավայրի մագնիսացման կորի տեսքից և կիրառված արտաքին մագնիսական դաշտից: Միաբարեղային իտրիում-երկարի նոնաքարի նմուշների դեպքում մոդելավորման արդյունքները համապատասխանում են փորձարարական արդյունքներին:

ՀԱՊՈՐՉՈՒՄՆԵՐ

Եղիազարյան Է. Վ. Բինար աղյուսակների ստուգող թեստերի բնութագրիչ ֆունկցիաների մասին էջ. 64–66

Աշխատանքում տրվում է համապատասխանություն մոնուսոն ֆունկցիաների և բինար աղյուսակների ստուգող թեստերի բազմության միջև: Որոշվում է բինար աղյուսակի փակուլային ստուգող թեստերի առավելագույն քանակը: